ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման- Ժողովրդական բանահյուսության ուսուցումը որպես բանավոր խոսքի և տրամաբանական մտածողության զարգացման միջոց

Մասնակից՝ Նաիրա Վարդանյան

Դպրոց՝ Նորակերտի միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Աննա Ստեփանյան

Վաղարշապատ 2023թ.

Բովանդակություն

1.Նախաբան.....3

2. Գրականության ակնարկ.....5

3. Գործնական համատեքստ.....7

4. Հետազոտության ընթացք.....13

4.1 Ժողովրդական բանահյուսության ուսուցումը որպես բանավոր խոսքի և տրամաբանության զարգացման միջոց.....13

5.Ամփոփում.....18

6.Օգտագործված գրականության ցանկ.....20

1.Նախաբան

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ չափազանց արագ են զարգանում տեղեկատվական տեխնոլոգիաները:Սակայն պետք է արձանագրեմ այն փաստը, որ դրանք միշտ չէ որ օգտագործվում են ճիշտ և տեղին:

Համակարգիչը, հեռախոսը, հեռուստացույցը հասանելի են բոլորին՝ սկսած նախադպրոցական հասակի երեխայից մինչև մեծահասակները և յուրաքանչյուրը այն օգտագործում է յուրովի, իր պահանջներին համապատասխան: Դրանք լեցուն են բազմաթիվ խաղերով, մուլտֆիլմերով, որոնք միշտ չէ որ ունեն դաստիարակչական ճիշտ նշանակություն, երբեմն ազդում են երեխայի մտավոր և ֆիզիկական զարգացմանը, տարիքային առանձնահատկություններին, որոնք առաջացնում են բազմաթիվ խոչընդոտներ երեխայի հետ աշխատելու ընթացքում:

Ստորև աշխատանքում կնշեմ այդ խոչընդոտներից մի քանիսը, որոնց մենք հանդիպում ենք գրեթե ամեն օր և ամենուր:

Երեխաների մեծամասնությունը ունի հետևյալ խնդիրները.

- Բանավոր խոսքի
- Հաղորդակցման կարողությունների
- Տրամաբանական մտածողության

Մեծամասնության մոտից բացակայում է՝

- Ընկերասիրությունը
- հանդուրժողականությունը

Սակայն ուսուցչի համար չկան անլուծելի հարցեր և նշածս խոչընդոտները կարելի է հաղթահարել երեխաների մեջ դեպի գիրքը, մանկական գրականությունը սեր ներարկելով: Մանկական գրականությունը պետք է դառնա ուսուցչի դաշնակիցը, փոքրիկի դաստիարակն ու խորհրդատուն: Քանի որ այն նպաստում է երեխայի աշխարհահայացքի հիմքերի ձևավորմանը, բնավորության կազմավորմանը, հարստացնում նրա նախնական գիտելիքները, բառապաշարը, կենսափորձը, հղկում գեղագիտական ճաշակն ու կոփում կամքը: Մասնվորապես ժողովրդական բանահյուսության ուսուցման միջոցով կարելի է հաղթահարել վերը նշված և մի շարք այլ խոչընդոտներ, որոնց հանդիպում է ուսուցիչը երեխաների հետ աշխատելու ընթացքում: Քանզի ժողովրդական բանահյուսությունը անփոխարինելի տեղ ունի դպրոցական ուսուցման համակարգում ու բանահյուսության բոլոր ճյուղերը տեղ են գտել մայրենիի բոլոր դասարանների դասագրքերում: Սովորողների հետ աշխատելու

ընթացքում մենք հանդիպում ենք տարաբնույթ խնդիրների, դրանք կարող են լինել թե ուսուցողական, և թե դաստիարակչական նշանակություն ունեցող:

Չէ որ մենք ոչ միայն կրթում, ուսուցանում այլ նաև դաստիարակում ենք մեր սաներին, մեր երկրի ապագա քաղաքացիներին:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես կարելի է ժողովրդական բանահյուսության ուսուցման միջոցով խթանել սովորողների բանավոր խոսքը և տրամաբանական մտածողությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

- մշակել ժողովրդական բանահյուսության վերաբերյալ սեփական մոտեցումները
- բացահայտել ժողովրդական բանահյուսության ձևեր
- բացահայտել, թե ինչպես շողովրդական բանահյուսության ուսուցման միջոցով զարգացնել սովորողների տրամաբանական մտածողությունը
- բացահայտել, թե ինչպես կարելի է ժողովրդական բանահյուսության ուսուցման միջոցով բարելավել սովորողների բանավոր խոսքը
- հիմնավորել ժողովրդական բանահյուսության ուսուցման անհրաժեշտությունը

Հետազոտության համար հիմք են հանդիսացել այս թեմայի վերաբերյալ գրողների մոտեցումները, ժամանակակից մեթոդիկայի ուսուցման ձևերը:

2. Գրականության ակնարկ

Ասում են, եթե ուզում ես ճանաչել մի ժողովրդի, նախ և առաջ ծանոթացիր նրա բանահյուսությանը , որտեղ արտացոլված են տվյալ ժողովրդի ավանդությունները, սովորությունները, կենցաղը, ընտանեկան բարքերը, մտածողությունը:

Բանահյուսությունը հայ ժողովրդի ազգային արժեհամակարգում իր ուրույն տեղն ունի և ինչպես Հովհաննես Թումանյանն է ասում նրանով են սնվում գրեթե բոլոր արվեստները, հատկապես գեղարվեստական գրականությունը:

Ժողովրդական բանահյուսությունը շատ հին ծագում ունի, այն սկզբնավորվել է այն ժամանակ, երբ դեռ չէին ստեղծվել տառերը; Գրերի գյուտից հետո բանահյուսությունը, գրավոր գրականությունը զարգանում են կողք կողքի: Բանահյուսության մեջ առանձնանում են մանուկներին վերաբերվող ստեղծագործությունները, որոնք աչքի են ընկնում ժանրային բազմազանությամբ:

Պատմական զարգացման ընթացքում մարդու կողմից գիտելիքների, հմտությունների, կարողությունների կուտակած փորձը սերնդեսերունդ փոխանցվել է ծիսակատարությունների ու խորհրդանշական գործողությունների կատարման ճանապարհով: Այնուհետև այս ամենը մեզ է հասել ժողովրդական բանահյուսության ժանրերի միջոցով:



Կրտսեր դպրոցականի կրթադաստիարակչական գործընթացում անփոխարինելի դեր է կատարում ժողովրդական բանահյուսությունը: Դրանք գրական գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություններ են, որոնցից յուրաքանչյուրը ունի իր ժանրային առանձնահատկությունները և գաղափարական, բարոյախրատական կամ ճանաչողական արժեքը՝ իր կրթական և դաստիարակչական ուղղվածությամբ դառնալով կրտսեր դպրոցի մայրենիի կարևորագույն բաղադրիչը: Այսօր դրանց ուսուցումը չափազանց կարևոր է թե իրենց գեղարվեստական արժեքի, թե ճանաչողական և դաստիարակչական նշանակության, թե պատկերավոր խոսքի ձևավորման, և թե բանավոր, տրամաբանական մտածողության զարգացման առումներով:

Բանահյուսության ճյուղերը պարզ և միևնույն ժամանակ, շատ բովանդակալից ստեղծագորշություններ են, որոնց հանդիպում ենք տարրական դասարանների մայրենիի դասագրքերում:Դրանցից հեքիաթները, առակները, ուսուցանվում են առանձին բաժիններով՝ օրինակ Ժողովորդն իմաստուն է, Երկնքից երեք խնձոր ընկավ, Ես այսպես ասեմ, դու այնպես հասկացիր և այլն:Իսկ մանրապատում ստեղծագործությունները՝ հանելուկները, առած- ասացվածքները, մեծ մասամբ դասագրքերում տեղ են գտել, որպես լրացուցիչ և օժանդակ նյութեր:

Հեքիաթները, առակները, հանելուկները, առած- ասացվածքները, շուտասելուկները, խաղիկ-տաղիկները , սուտասելուկները, օրհնանք, մաղթանքները դարեդար կրթել են երեխաներին: Այս ստեղծագործությունները մատաղ սերնդի դաստիարակության կարևոր միջոց են, որոնք նպաստում են,

- ✓ բառապաշարի զարգացմանը
- ✓ բանավոր խոսքի , լեղվի հարստացմանը
- ✓ պատկերավոր, տրամաբանական մտածողության երևակայության ու ստեղծագործական կարողություններին

3. Գործնական համատեքստ

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ սովորողների բանավոր խոսքի և տրամաբանության զարգացման լավագույն միջոց են հանդես գալիս ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններն իրենց ժանրային առանձնահատկություններով յուրահատուկ տեղ են գրավում տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում: Այսօր դրանց ուսուցումը չափազանց կարևոր է թե նրանց գեղարվեստական արժեքի, թե ճանաչողական և դաստիարակչական նշանակության, թե պատկերավոր խոսքի ձևավորման և թե տրամաբանական մտածողության զարգացման առումներով:

Ժողովրդական այդ պարզ, խիստ հակիրճ, բայց և շատ բովանդակալից ստեղծագործություններին՝ առածներին, ասացվածքներին, հանելուկներին ու շուտասելուկներին, հաճախ կարելի է հանդիպել տարրական դասարանների մայրենիի դասագրքերում: Դրանք մեծ մասամբ տրված են լինում որպես լրացուցիչ կամ օժանդակ նյութեր, որոնք պարզաբանում են հիմնական բնագրերի այս կամ այն կողմը, կամ խորացնում ու ամբողջացնում են դրանց գլխավոր միտքը: Աշակերտներին պետք է սովորեցնել գործնական

ճանապարհով դրանք զանազանել միմյանցից, մատչելի ձևով բացատրել, վերլուծել

ըստ բովանդակության ու ձևի, անգիր անել և օգտագործել խոսքաշարում:

մանրապատում Ժողովրդական ստեղծագործությունները նպաստում են կրտսեր

դպրոցականի աշխարհաճանաչողական գիտելիքների հարտացմանը, տրամաբանական մտածողության զարգացմանը, խոսքի զարգացմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Ժողովրդական հանելուկները, առած-ասացվածքները, շուտասելուկները, խաղիկները

և այլ բնույթի ստեղծագործությունները դարեդար կրթել և դաստիարակել են երեխաներին:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները մատաղ սերնդի դաստիարակության կարևոր միջոցներից են: Դրանք նպաստում են՝

- ✓ երեխայի կենսափորձի, բառապաշարի, լեզվի հարստացմանը,
- ✓ պատկերավոր, տրամաբանական մտածողության, երևակայության ու ստեղծագործական կարողությունների, կամքի զարգացմանը,

- ✓ մտային հնարների (վերլուծություն, համադրում, համեմատում, համադրում, ընդհանրացում) ձևավորմանը,

Առած-ասացվածքներ

Առածներն ու ասացվածքները հայ ժողովրդական բանահյուսության մարգարիտներ են: Նրանք առաջացել են մարդկանց աշխատանքային գործընթացում:

Թե՛ առածը, թե՛ ասացվածքը հակիրճ, պատկերավոր, իմաստալի ժողովրդական խոսք են: Նրանցում արտացոլված են ժողովրդի կյանքի ու կենցացի բոլոր կողմերը՝ընտանիքը, դաշտն ու անտառը, հասարակությունը, նրա պահանջները, ձգտումներն ու սովորույթները, նրա վերաբերմունքը բնության, անհատի գործունեության ու կյանքի տարբեր երևույթների վերաբերյալ: Դրանց միջոցով մարդիկ հնարավորություն են ունենում երեխաներին ըմբռնել տալ չարն ու բարին, լավն ու վատը, սուտն ու կեղծիքը, ինչպես նաև ժողովրդական կյանքն ու մտածողությունը: Ուստի չափազանց մեծ է դրանց բարոյադաստիարակչական, ճանաչողական, իմացական արժեքը:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին՝ առածներին, ասացվածքներին երեխաները ծանոթանում են դեռևս առաջին դասարանից՝ գրաճանաչության շրջանից: Առածներն ու ասացվածքները «…ոչ թե բարոյական կանոն են հայտնում,այլ բարու պատկերն են նկարագրում, ոչ թե պարտականություն, այլ աշխարհի ընթացքն են բացահայտում»:

Առածներն ու ասացվածքներն աչքի են ընկնում իրենց բարոյախրատական արժեքով, դասագրքերում մատուցվում են դասանյութից հետո և ուսուցման գործընթացում պետք է սերտորեն կապվեն վերջիններիս գաղափարական բովանդակության հետ՝ դառնալով դրանց հակիրճ ու պատկերավոր ամփոփումը:Թեև առածների և ասացվածքների ուսուցումը մեթոդիկայում մատուցվում է միասին, քանի որ դրանք մոտ են իրենց ժանրայինառանձնահատկություններով, ուսուցման նպատակներով ու խնդիրներով, այնուամենայնիվ, դրանք ունեն նաև տարբերություններ ՝ պայմանավորված այլաբանական իմաստի առկայությամբ կամ բացակայությամբ:

Երեխաների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ ժողովրդական

մանրապատում ստեղծագործությունների զանազան տեսակներն ուսումնասիրվում են տարբեր դասարաններում կամ ավելի ստույգ՝դասարանից դասարան, դասագրքից դասագիրք փոխվում է դրանց հարաբերակցությունն ու բաշխումը:

Որպես դիպուկ ու համառոտ խոսքի տեսակներ՝ առածներն ու ասացվածքները նպաստում են երեխաների լեզվի մշակմանն ու հարստացմանը,տրամաբանական, պատկերավոր մտածողության, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Շուտասելուկներ

Երեխաների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում շուտասելուկները: Շուտասելուկները սակավ հանդիպող բառակապակցություններ, դժվարահունչ երկտողեր, քառյակներ, երբեմն նաև ընդարձակ ասույթներ են: Դրանք ժողովրդական կյանքի բոլոր կողմերն ընդգրկող ստեղծագործություններ են: Հնչողական խայտաբղետությունը, լեզվական <<խրթինությունը>> շուտասելուկներին հաղորդում են խաղի բնույթ և թույլ տալիս դրանց դասելու խաղերգերի շարքը: Այսպես, օրինակ՝

Վարա՛գ, գնա՛ մարագ, արի՛,
Արա՛գ գնա՛ մարագ, արի՛:
Թե մարագում կարագ գտար,
Կարագը ա՛ռ, արա՛գ արի:

Շուտասելուկները վարժության նպատահակարմար նյութեր են նաև լեզվական-արտասանական թերություններ ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների համար: Շուտասելուկները մի քանի անգամ պետք է կարդալ և անգիր արտասանել տալ այդպիսի երեխաներին՝ հետզհետե արագացնելով արտասանության տեմպը, որպեսզի նրանց մեջ խոսքի նորմալ արագություն ու ճիշտ խոսելու կարողություն մշակվի: Այդպիսի շուտասելուկներ են՝

Շունը շուն է, մուկն էլ՝ մուկ,
Մուկը շուն չէ, շունն էլ՝ մուկ:

Սուտասելուկներ

Հետաքրքիր և զվարճալի է նաև սուտասելուկների օգտագործումը մայրենիի դասագործընթացում:Սուտասելուկները, ինչպես նաև հանելուկներն ունեն ճանաչողական արժեք և նպաստում են երեխայի աշխարհաճանաչողական գիտելիքների գործադրությանը: Սուտասելուկները դասագրքերում ավելի փոքր տեղ են զբաղեցնում: Անշուշտ, մանկագրության մեջ էլ դրանք ավելի հազվադեպ են քան հանելուկներն ու շուտասելուկները: Դրանք զարգացնում են ստեղծագործական երևակայությունը, ուշադրությունը, ձևավորում են սրամտություն, հումորի զգացում: Սուտասելուկները նպաստում են անձնային որակների ձևավորմանը: Դրանք երեխաներին մղում են մտածելու, վերլուծելու, համեմատելու, հակադրելու, համադրելու և ընդհանրացումներ կատարելու: Այսպես օրինակ՝

Ունեմ մի սագ՝ գարու չափ,

Ձու է ածում սարի չափ,
Երկու թևը թե բացի,
Գիշեր կգա՝ իմացի՛ր

Սուտասելուկի ուսուցումը նպաստում է երեխաների մեջ հումորի զգացում ձևավորելուն ու զարգացնելուն: Զարգացնում է ստեղծագործական երևակայությունը, նպաստում խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը: Ընդհանրապես մայրենիի դասագրքերում մեծ տեղ է հատկացված հումորին, երեխաների մեջ հումորի զգացում ձևավորելուն: Բավականին շատ են հումորով, կատակով, զվարճալիքով լի բնագրային նկարազարդումները, առանձին կատակային նկարները, սխալներով լի զվարճալի նկարները: Բնագրերի մեծ մասում կարմիր թելի պես անցնում են հումորը, կատակը, զվարճալիքը: Դրանք արտահայտվում են նաև հանելուկներում, շուտասելուկներում, խնդուկներում, զվարթ նկարներում, հարցերի մեջ, սուտասելուկներում, հաշվելուկներում, նկարելուկներում և այլն:

Հանելուկ

Հանելուկը առարկայի կամ երևույթի ցայտուն և բնութագրական հատկանիշների սեղմ և պատկերավոր նկարագրությունն է, որն ունի մի կողմից՝ աշխարհաճանաչողական գիտելիքների հարստացման, մյուս կողմից՝ տրամաբանական մտածողության զարգացման նշանակություն: Նպաստելով կրտսեր դպրոցականի՝ համեմատելու, հակադրելու, զուգորդելու և ընդհանրացնելու կարողությունների կատարելագործմանը՝ հանելուկները նաև չափածո խոսք կառուցելու նախնական կարողությունների ձևավորման միջոց են:

Հանելուկը երևույթի կամ առարկայի հակիրճ, փոխաբերական նկարագիրն է, ուր քողարկված տրվում են կռահվող երևույթի հատկանիշը, կամ իմացվող առարկան փոխարինվում է վերջինիս հատկությունն ունեցող երևույթով, ստիպում երեխային մտածել: Հանելուկների պատասխանները կռահելու ուղղությամբ տարվող աշխատանքներն սկսվում են դեռևս առաջին դասարանում՝ գրաճանաչության ուսուցման նախայբբենական շրջանում: Նախադպրոցական տարիքի երեխաներին անգամ ծանոթ է ստեղծագործության այդ ժանրը, և նրանք սիրով կռահում են իրենց առաջարկված մատչելի հանելուկների պատասխանները: Նրանց պատասխանների գուշակումը նպաստում է հետագա ողջ ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Դասի ժամանակ հանելուկն օգտագործվում է թե որպես նոր նյութի հաղորդման, թե աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամփոփման միջոց, թե որպես դասին հետաքրքրաշարժություն հաղորդող հնարք:

Ուշինսկին հանելուկները համարում է ծանոթ առարկաների գեղեցիկ նկարագրություններ, որոնք պետք է զետեղել դասագրքերում նրա համար, որ երեխաները դրանց պատասխանելով՝ իրենց մտքին սնունդ տան:

Խաղիկներ

Մայրենիի դասագրքերում իրենց ուրույն տեղն ունեն խաղիկները: Խաղիկը հայ ժողովրդական բանահյուսության ժանրերից է: Խաղիկները քառատող քնարական երգեր են և փոխանցվել են սերնդից սերունդ բերանացի կամ էլ երգերի միջոցով: Խաղիկների թեմաները բազմազան են՝ աշխատանքային, կենցաղային, օրորոցային և այլն: Դրանց մեջ արտացոլվում են լավ կյանքի երազանքը, խոհերը, տրամադրությունները: Խաղիկներն աչքի են ընկնում իրենց գեղարվեստական հակիրճությամբ և զգացմունքների անմիջականությամբ: Շատ խաղիկներ գրառվել են Գարեգին Սրվանձտյանի, Կոմիտասի, Մանուկ Աբեղյանի և այլոց կողմից:

Խաղիկները նպաստում են երեխաների ստեղծագործական երևակայության, մտածողության, ուշադրության զարգացմանը: Խաղիկները օգտագործվում են որպես մանկական վիճակահանության միջոց: Այսինքն՝ խաղի ընթացքում խաղավար ընտրելու համար իրականացնում ենք վիճակահանություն խաղիկների միջոցով Օրինակ՝

Վարդն ի բացվե առավոտման շաղերով,
Իմ յար բաղջեն վարդ կը քաղի մաղերով…
Վարդն ի բացվե Վարդեվրվան կիրակին,
Քո սերն ինկե մեջ իմ պուրակին:

Մաղթանքներ ու օրհնանքներ

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից են նաև մաղթանքներն ու օրհնանքները: Դրանք նույնպես զետեղված են մայրենիի դասագրքերում: Ըստ ժողովրդի՝ մաղթանքներն ու օրհնանքները եթե չիրականանան, ապա երբեք բացասական ազդեցություն չեն ունենա: Մաղթանքը բարեմաղթության, որևէ բարի բանի հորդորանքի, հաջողության, առողջության, բարի ցանկության արտահայտություն է:Մաղթանք-օրհնանքները հանդիսանում են յուրաքանչյուրի սեփականությունը:

Ամեն ոք կարող է կարող է օրհնել, բարի մաղթանքներ ցանկանալ և ենթարկվել դրանց: Օրհնանքներում հիմնականում տրված է օրհնվող անձի վիճակը մի այլ ավելի լավով փոխարինելու ապահվության փափագը, իսկ որոշ օրհնանքներում՝ տվյալ վիճակի պաշտպանության ապահովումը: Մաղթանքներ միմյանց հղում են որևէ ուրախության, եկեղեցական տոների ժամանակ: Եթե մաղթանքներն ասվում են անկեղծ և բաց սրտով, ապա դրանք անպայման իրականանում են: Մաղթանքներն

ունեն դաստիարակչական մեծ նշանակություն: Դրանք երեխաների մեջ սերմանում են բարություն, կամեցողություն, ճշմարտախոսություն և այլ բարոյական որակներ:

Դրանք, ինչպես նաև օրհնանքները, նպաստում են անձի ձևավորմանը, ստեղծագործական մտածողության և երևակայության զարգացմանը, ինչպես նաև գեղեցիկ, կապակցված խոսքի կառուցմանը: Օրինակ՝

Խաղաղություն՝ ամենքին:
Պայծառ արև, անամպ երկինք աշխարհի բոլոր մանուկներին:
Թող երկնքում միշտ թևածի խաղաղության աղավնին:

Մաղթանքներով և օրհնանքներով հարուստ են օրորոցային երգերը, որոնց կրտսեր դպրոցականները ծանոթանում են ոչ միայն մանկական շրջանում, այլև երաժշտության , մայրենիի դասերի ընթացքում: Այս առումով օրորոցային երգերը պարունակում են զգալի ճանաչողական նյութ և ունեն կարևոր արժեք կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման համար: Նման երգերում մեծ տեղ ունի հորն ու մորը կյանք պարգևող զավակի գովքը, որը զուգակցվում է մաղթանքներով և օրհնանքներով: Ստորև նշված օրինակում մայրը զավակին ցանկանում է ամենայն բարիք, գեղեցիկ ապագա, առողջություն, քաջություն, նյութական ապահովություն և երջանկություն.

Օրինակ՝ Դուն ապրես հազար տարի,
Դուն ապրես հորով, մորով,
Հաց նստիս ջուխտակ աղբրով,
Մեծանաս ու մեծ մի լինիս,
Բոլորիս ու գեղ մի լինես,
Ան գեղն ուր մեծ չի կենա,
Ան գեղին մեծն դու լինիս…

4. Հետազոտության ընթացք

4.1 Ժողովրդական բանահյուսության ուսուցումը որպես բանավոր խոսքի և տրամաբանության զարգացման միջոց

Ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններին որպես առանձին բաժին, կրտսեր դպրոցականները ծանոթանում են մայրենիի գասագրքերում, տարրական բոլոր դասարաններում: Դրանց մի մասին ծանոթանում են մայրենիի դասագրքերում զետեղված տարբեր բնույթի բնագրերի միջոցով՝ առակներ, հեքիաթներ, և այլն: Այդ բնագրերի միջոցով ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից ծանոթանում են առած-ասացվածքներին, մաղթանք-օրհնանքներին, մասամբ էլ նաև՝ հանելուկներին: Իսկ մյուս տեսակներին՝ շուտասելուկներ, սուտասելուկներ, խաղիկներ, ինչպես նաև հանելուկներ, կրտսեր դպրոցականները ծանոթանում են առանձին՝ որպես լրացուցիչ, նրանց տրամադրությունը, երևակայությունը, մտածողությունը զարգացնող նյութեր:

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված են հիմնականում դաստիարակչական արժեք ներկայացնող ստեղշագործություններ, որոնք վերաբերում են երեխաների կյանքին, նրանց հետաքրքրող թեմաներին: Այս պատմվածքների ընդհանուր գաղափարը կարող ենք արտահայտել առած-ասացվածքների միջոցով, որը հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականներին ունենալ ընդհանուր պատկերացումներ ներկա ժամանակաշրջանի կյանք իրական երևույթների մասին, այնպիսի երևույթների, որոնք նպաստում են մարդու բարոյական դաստիարակությանը: Պատմվածքների միջոցով առած-ասացվածքներին և մաղթանք-օրհնանքներին ծանոթանալը նպաստում է ոչ միայն բառապաշարի հարստացմանը, այլև աշխարհայացքի, տրամաբանականե մտածողության և անհատականության ձևավորմանը:

Սկզբնական շրջանում առած-ասացվածքներին կրտսեր դպրոցականները ծանոթանում են գործնական ճանապարհով՝ պատմվածքների, առակների, բանաստեղծությունների միջոցով, իսկ տեսական գիտելիքները նրանք ստանում են արդեն երրորդ դասարանում: Պատմվածքի, հեքիաթի, բանաստեղծության, առակի իմաստները ամբողջության մեջ ներկայացնող առած-ասացվածքները ներկայացված են բնագրից հետո, որը հնարավորություն է տալիս ամբողջությամբ ընկալել բնագրի ենթատեքստը:

Իմ հետազոտության ընթացքում իրականացել հետևյալ աշխատանքը

Դասարան՝ 4-րդ

Դասի թեման՝ Թող ուրիշն անի (չինական հեքիաթ) [19, էջ 106]

Դասի նպատակները՝

Դասի արդյունքում աշակերտները պետք է՝

- Սահուն ընթերցեն բնագիրը և վերարտադրեն բովանդակությունը,
- Բնութագրեն հերոսներին, մեկնաբանեն նրանց վարքագիծը,
- Ստեղծագործաբար շարունակեն հեքիաթը,
- Ձևակերպեն հեքիաթի հիմնական միտքը և վերաբերմունք արտահայտեն դրա նկատմամբ,
- Հարստացնեն իրենց բառապաշարը:

Դասի վերջնարդյունքները

- Կկարդան տեքստը զորգահեռ իրականացնելով բացատրական աշխատանք
- Կկազմեն բարդ նախադասություններ օգտագործելով տրված շաղկապները
- Կհորինեն հեքիաթին այլ ավարտ

Կմասնակցեն

Խթանում

Գրատախտակին գրեցինք ալարի, ով ալարի, ոչ բառերը և առաջարկեցինք աշակերտներին վերականգնել առածը ,Ով ալարի, ոչ դալարիե:

Աշակերտները վերականգնում են առածը, այնուհետև հարց ենք ուղղում ամբողջ դասարանին.

- Ինչպե՞ս եք հասկանում առածի իմաստը:
- Ով որ չաշխատի ոչ մի բանի չի հասնի:

Աշակերտների մեկնաբանությունները լսելուց հետո, խրախուսում ենք նրանց և առաջարկում ենք բացել դասագիրքն ու կարդալ հղումը:

Պարզվում է , որ յոթ սարից, յոթ ձորից այն կողմ ոչ բոլորը գիտեն այս առածը , իսկ թե ինչու՝ կիմանանք, եթե կարդանք ,Թող ուրիշն անի չինական հեքիաթը:

Իմաստի ընկալում

Նախապես դասանյութը բաժանում ենք երկու մասի և առաջարկում ընթերցել առաջին հատվածը՝ ,Իսկ սառնամանիքը գնալով սաստկանում է նախադասությունը ներառյալ:

Հատվածն ընթերցելուց հետո դասարանին ենք ուղղում հետևյալ հարցը.

- Ի՞նչ եք կարծում, երեխանե'ր,ինչպե՞ս կվարվեն ճանապարհորդները:

- Քանի որ վերնագիրը հուշում է , որ մեր դասի հերոսները աշխատասեր չեն, ուրեմն՝ նրանցից ոչ մեկն իր տեղից չի շարժվի:

Աշակերտների պատասխաններից հետո ընթերցում են մինչև վերջ՝ ուշադրության տակ պահելով աշակերտների արած կանխատեսումները:

- Տնակում ինչպե՞ս էր իրեն պահում նրանցից յուրաքանչյուրը:
- Նրանցից յուրաքանչյուրը ծույլ էր և անբան, դրա համար էլ տեղից չշարժվեցին:
- Բնութագրե'ք Ճամփորդներին:
- Ճամփորդները ՝ ծույլ, անաշխատասեր, անբան, ալարկոտ,գործավախ:
- Ի՞նչ պատճառներ էին բերում ճամփորդները գործը չանելու համար: Ինչու՞. Ընտրիր ճիշտ տարբերակները և հիմնավորիր հեքիաթի տողերով՝

ա) ծուլանում էին

բ) ուզում էին գործն ուրիշի վրա բարդել

գ) ինքնարդարանում էին

դ) իրոք տկար էին

ե) վախենում էին մթից

զ)մեծամիտ էին :

- Առաջին ճամփորդը պատճառաբանեց, որ ոտքերը ցավում է և ինքը չի կարող փայտ բերել, երկրորդը՝ փորս ցավում է, իսկ երրորդը՝ գլուխս պտտվում է:
- Նրանցից յուրաքանչյուրը առողջ էր, բայց ամեն մեկը ուզում էր գործն ուրիշի վրա բարդել:
- Ի՞նչ եք կարծում ՝ ինչու՞ է հեքիաթն այդպես ավարտվում :
- Քանի որ նրանք ծույլ էին և չէին սիրում աշխատել դրա համար էլ տեղից չշարժվեցին և սառչեցին:

Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը:

Հեքիաթի հիմնական իմաստն այն էր, որ չպետք է գործը ուրիշի վրա բարդել և նստել, պետք է լինել աշխատասեր:

<u>Շարունակի'ր հեքիաթը:</u>

Աշակերտները բաժանվում են խմբերի և հորինում հեքիաթի շարունակությունը.

<u>Առաջին խումբ</u>- Երեքն էլ տեղից չշարժվեցին և ամբողջ գիշեր մրսեցին, իսկ առավոտյան արդեն բոլոր էլ մրսել էին և հիվանդացել:

<u>Երկրորդ խումբ-</u> Ընկերներից մեկը տեսնելով,որ ոչ մեկը տեղից չի շարժվում ինքը գնաց փայտի:

<u>Երրորդ խումբ</u>- Ընկերները եկան համաձայնության և միասին գնացին փայտի:

Դասանյութի ամբողջական ընթերցումից հետո կատարում ենք բառաբացատրական աշխատանք : Բացատրում ենք ամայի , լքված, մրրիկ բառերը և աշակերտների ուշադրությունը հրավիրում է մրրիկ, երրորդ բառերի գրության վրա:
ամայի-անբնակ, անմարդաբնակ, անշեն,
լքված-անտեսված, անուշադրության մատնված
մրրիկ-ուժեղ քամի, հողմ, սամում:

Աշակերտները գրում են այդ բառերը և շարքը լրացնում նման ուղղագրություն ունեցող բառերով:

Հաջորդ քայլին աշակերտները պատասխանում են դասանյութի բովանդակության վերաբերյալ վերարտադրողական հարցերին, որոնց պատասխանները ակնկալվում են բոլոր աշակերտներից: Այնուհետև հանձնարարվում է ընտրել և կարդալ այն հատվածները, որտեղ՝ նկարագրվում է՝
ինչ ճանապարհով էին քայլում ճանապարհորդները, ինչ պատահեց, տնակում ինչ էր ասում ճանապարհորդներից յուրաքանչյուրը:
Որից հետո աշակերտները որոշում են ճանապարհորդների տրամադրությունը բնագրի տարբեր հատվածներում:

Հաջորդ քայլին աշակերտներն ըստ բնագրի բովանդակության՝ բնութագրում են ճանապարհորդներին:
Այնուհետև աշակերտները հեքիաթը պետք է բաժանեն այնպիսի մասերի, որոնք վերնագրվեն այսպես.
, Բուքն սկսվեց, , Ճամփորդները սաստիկ մրսեցին, ,Ճամփորդները վիճում են,, Ծույլերը պատժվեցին:

<u>Կշռադատման փուլ</u>

Հեքիաթի ամբողջական ընթերցումն ավարտելուց հետո առաջարկում ենք աշակերտներին գրել կամ նկարել իրենց տպավորությունները: Այս փուլում օգտագործում ենք <<Քառաբաժան>> մեթոդական հնարը: Այն կարելի է կիրառել փոքր խմբերով: Աշակերտներն իրենց մտքերը համապատասխանաբար գրառում են 4 բաժիններից յուրաքանչյուրում: Այս մեթոդը նպաստում է բառապաշարի հարստացմանը, գրավոր խոսքի և պատկերային մտածողության զարգացմանը:

- ✓ Ի՞նչ էիք լսում հեքիաթը կարդալիս:
- ✓ Ընտրել նոր վերնագիր:
- ✓ Ի՞նչը կփոխեիք հեքիաթում:
- ✓ Բնութագրել հերոսներին:

Տնային հանձնարարություն սահուն ընթերցել բնագիրը

Այս դասի նմուշ օրինակում ներկայացված հարցադրումների միջոցով աշակերտները ներգրավվում են նաև զրույց-քննարկումների և երկխոսությունների մեջ: Ընկերների արտահայտած գաղափարների , կարծիքների ու տեսակետների շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ ճշգրտում է իր պատկերացումները ու ընկալումները: Զուգահեռաբար ընդլայնվում ու հարստանում է աշակերտների բառապաշարը, ձևավորվում և հղկվում է նոր մտքեր ու գաղափարներ:

5.Ամփոփում

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններն ունեն իրենց գրառման հարյուրամյա պատմությունը: Այդ ստեղծագործությունների գրառումն ու արժևորումը պայմանավորված է եղել համաժամանակյա ազգային զարթոնքի ու նոր ազգային գրականության կազմավորման պատմական ընթացքի հետ:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները՝ որպես հայ ժողովրդական բանահյուսության անքակտելի մաս, անմասն չեն մնացել ժողովրդի կյանքում կատարվող իրողությունների արտացոլումից:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները ընթանալով ժամանակների տարբեր ճանապարհներով՝ ենթարկվում են թեմատիկ փոփոխությունների՝ իրենց մեջ ներառելով ժանրին ոչ հարազատ յուրահատուկ թեմաներ: Այլ կերպ ասած՝ ընդլայնվում է դրանց ճանաչողական նշանակությունը:

Սրանք հարուստ գանձարան են նաև ազգային կրոնի, ազգային հավատալիքների և ավանդական կենցաղային սովորությունների տարրերով, որոնք ունեն ազգային համակողմանի նկարագիր:

Այն ասույթներին, որոնց անդրադարձել ենք աշխատանքի մեջ, պետք է դիտվեն որպես երեխաներին կրթելու, դաստիարակելու, ազգային ավանդույթներին հաղորդակից դարձնելու առանձնահատկություններ:

Ուսումնասիրելով ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունների էությունն ու առանձնահատկությունները՝ կարող ենք եզրակացնել, որ դրանք նպաստում են երեխաների համակողմանի զարգացմանն ու դաստիարակմանը: Չնայած դրանք փոքրածավալ են, բայց և այնպես ներառում են կյանքի բովանդակությունն ու խորհուրդները:

Ամեն մի ժողովրդի մշակույթի, ավանդույթների և սովորույթների մասին ամբողջական տեղեկություններ կարող ենք ստանալ ուսումնասիրելով նրանց կյանքի պատմությունը՝ ժողովրդական բանահյուսությունը: Կրտսեր դպրոցականներին հաղորդակից դարձնելով բանահյուսության նմուշներին՝ մենք հարստացնում և յուրօրինակ ենք դարձնում մեր մշակույթը:

Ժողովրդական մանրապատում բանահյուսության հարատևությունը պայմանավորված է թե՛ տվյալ ժամանակամիջոցից, թե՛ դրանք խոսքում կիրառելուց: Հարատև ստեղծագործությունների այս համակարգում երեխաներն աստիճանաբար պասիվ ունկնդիրների վիճակից փոխարինվում են ժողովրդական ստեղծագործությունների ակտիվ կրողների:

Կատարված հետազոտական աշխատանքը մեզ հանգեցրեց հետևյալին.

- ✓ Կրտսեր դպրոցականների կրթական, դաստիարակչական և զարգացնող խնդիրների լուծումն իրականացվում է նաև ժողովրդական բանահյուսուն ժանրեր հանդիսացող ստեղծագործությունների միջոցով:
- ✓ Չնայած այն բանին, որ կրտսեր դպրոցականները ժողովրդական բանահյուսության ժանրերի ստեղծագործությունների որոշ տեսակներին ծանոթանում են դեռևս նախադպրոցական փուլում, այնուամենայնիվ դրանց տեսական գիտելիքներին, առանձնահատկություններին ծանոթանում են մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների միջոցով:
- ✓ Ծանոթանալով ժողովրդական բանահյուսությանը կրտսեր դպրոցականները պատկերացում են կազմում կյանքի լավ և վատ կողմերի, բարի և չար երևույթների, ինչպես նաև մարդասեր քաղաքացի ձևավորման մասին:
- ✓ Ժողովրդական բանահյուսության ուսուցման միջոցով մենք երեխաներին սովորեցնում ենք մտածել, ստեղծագործել և դրանք կիրառելով՝ հարստացնել իրենց բառապաշարը:
- ✓ Ժողովրդական բանահյուսության միջոցով մենք կարող ենք երեխաներին դաստիարակել համակողմանիորեն՝ ֆիզիկական, բարոյական, մտավոր, գեղագիտական, էկոլոգիական, քաղաքացիական, աշխատանքային և այլն:
- ✓ Լինելով փոքրածավալ սեղմ ստեղծագործություններ՝ ժողովրդական բանահյուսության ժանրերը ավելի շատ են ընթերցվում երեխաների կողմից, քան մյուս ստեղծագործությունները:
- ✓ Այս ստեղծագործությունների միջոցով երեխաները կարողանում են ամբողջական պատկերացում ստանալ բնական երևույթների, առարկաների, շրջապատող միջավայրի, ինչպես նաև բնության գլուխգործոցի՝ մարդկանց առանձնահատկությունների մասին:
- ✓ Մարդը, լինելով բնության զավակ, պետք է կարողանա ճանաչել այն երևույթներն ու օրինաչափությունները, որոնք կան և գործում են բնության մեջ, իսկ բնությունը ճանաչելու միջոցներն ու ուղիները շատ են ու բազմազան, որոնցից մեկը ժողովրդական մանրապատում ստեղծագործություններն են:
- ✓ Ժողովրդական մանրապատում

6.Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Ժողովրդական խաղիկներ, Եր., 1940, 582 էջ
2. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Եր., <<Հայաստան>>, 1976, 1642 էջ
3. Գալստյան Ա. Վ. և ուրիշներ, Ինքնուրույն ընթերցանության նյութեր (2-րդ դասարան), Եր., <<Էդիթ պրինտ>>, 2010,143 էջ
4. Գյուլամիրյան Ձ. Հ., <<Զանգակ>> այբբենարանի մեթոդական ուղեցույց, Եր., <<Զանգակ-97>>, 2003,
5. Գյուլամիրյան Ձ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., <<Զանգակ-97>>, 349 էջ
6. Գրիգորյան Գ., Հանելուկները և դրանց դերը դպրոցականների կյանքում, /Նախաշավիղ,3/, 2003, 64 էջ
7. Գրիգորյան Գ. Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., 1980, 470 էջ
8. Սահակյան Յ., Հայ ժողովրդական բանահյուսության նյութեր, Եր., 2003, 158 էջ
9. Սահակյան Յ., Շուտասելուկներ և բառախաղեր, Եր., 2004, 27էջ
10. Սարգսյան Վ. Ս., Այբբենարան, Եր., <<Մարմար>>, 2015, 155 էջ
11. Սարգսյան Վ. Ս. և ուրիշներ, Մայրենի 1,Եր., 2016, 63 էջ
12. Սարգսյան Վ. Ս. և ուրիշներ, Մայրենի 2, Եր., 2015,159 էջ
13. Սարգսյան Վ. Ս. և ուրիշներ, Մայրենի 3, Եր., 2010, 175 էջ
14. Սարգսյան Վ. Ս. և ուրիշներ, Մայրենի 4, Եր., 2016, 175 էջ
15. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., <<Լույս>>, 1980, 563էջ